

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵԾՈՒԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 6

ԹՈՐՈՄ ԹԱԴԵՈՍՅԱՆ

ԼՈՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 6

635.652

10-14.

ԹՈՐՈՍ ԹԱԳԵՆՈՍՅԱՆ

ԱՅՈՒԳՎԱՆ Է 1981

ԼՈՐՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ

~~10784~~
A 18925



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ:

Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Պրակի խմբագիր՝ Ա. Ն. ԱԶՍՏԱՆ

ТОРОС ТАТЕВОСЯН

**Возделывание фасоли
в условиях Ленинанканского плато**

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

Տեղական պայմաններին հարմարված բարձր բերք տվող լո-
բադդի կուլտուրաների սորախը ստանալու հարցը մեր երկրի
հետպատերազմյան շրջանի գյուղատնտեսության վերելքի մեծ
և փառահեղ ծրագրի մի մասն է կազմում:

Ընդհեղենների կարևորությունը սոցիալիստական գյու-
ղատնտեսության ապրանքայնության բարձրացման համար աղ-
ներև է: Մեր կոլխոզային գյուղացիությունը, ինչպես նաև
քաղաքի ազգարնակչությունը մեծ կարիք ունեն էժանագին և
բարձրորակ սպիտակուցային սննդանյութերի:

Մեզ մոտ Սովետական Հայաստանում ազգաբնակչության
աննդի մեջ սպիտակուցային սննդանյութերի զգալի մասը պետք
է լրացվի բուսական ծագում ունեցող սպիտակուցային սննդա-
նյութերով, քանի որ Սովետական Հայաստանում ձկնեղենի աբ-
տաղրությունը խիստ սահմանափակ է, համեմատած Սովետա-
կան Միության այլ մարզերի ու սեպուրիկաների հետ:

Ընդհեղենների մեջ սոյայից ու արախիսից հետո լոբին
համարվում է ամենալավը թե՛ իր սննդարարությամբ և թե՛ իր
որակով, քանի և նրա մշակությամբ պետք է զբաղվել նաև Լե-
նինականի հարթավայրում:

Լոբին պատկանում է թիթեռնածաղկավորների ընտանիքին:
Թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույսերը սպի-
տակուցային սննդանյութերով հարուստ լինելուց բացի հողում
մեծ քանակությամբ ազոտ են կուտակում:

Այս ընտանիքին պատկանող սրտչ կուլտուրաների սերմերը
(լոբի, սոյա, ոսպ, սոյա, արախիս, սիսեռ և այլն) մեք ժողովրդ-
ական սննդի կարևոր մասն են կազմում: Սոյայի և արախիսի
սերմերը տալիս են նաև լավ բուսական յուղ:

Լոբիները իրենց արտաքին ձևով և ռմժան բնույթով բա-
ժանվում են երկու խմբի.

1. Թուփ կամ կտտ
2. Փաթաթվող կամ սարուս

ԹՈՒՓ ԿԱՄ ԿՈՒՏ ԼՈՒՐԻՆԵՐ

Այս լորինները տալիս են ցածր բույսեր՝ 30-ից 45 սմ բարձրութեամբ, համարվում են դաշտային տեսակի լորիններ, որոնց մշակումը, ինչպես նաև բերքահավաքը, գյուղատնտեսական տեխնիկայի զարգացման ներկա պայմաններում հնարավոր չափով ենթարկվում է մեքենայացման:

Թուփ կամ կուտ լորինների ծաղիկները ցողունի վրա դասավորված են լինում խիտ և ամփոփ. այս առանձնահատկությունը ունդերի միաժամանակ հասունանալու համար խիստ կարևոր հատկանիշ է և չափազանց անհրաժեշտ է նաև լորու բերքահավաքի մեքենայացման համար:

Թուփ լորինները ավելի վաղահաս են, քան փաթաթվող լորինները:

ՓԱԹԱԹՎՈՂ ԼՈՒՐԻՆԵՐ

Այս ձևի լորինները փաթաթվող, շատ բարձր բույսեր են, որոնք իրենց նորմալ աճման և զարգացման համար պահանջում են հենափայտեր—սարուներ: Հաճախ փաթաթվող լորինների բարձրությունը հասնում է 2,0—2,5 մետրի և նույնիսկ ավելի: Փաթաթվող լորինները մշակվում են գլխավորապես բանջարանոցային պայմաններում: Իտալիային պայմաններում փաթաթվող լորինների ցանքերի մշակման աշխատանքների մեքենայացումը հնարավոր չէ: Այս ձևի լորինները համեմատած կուտ լորինների հետ, ավելի խոնավասեր են:

Սարու լորինների հասունացումը տեղի է ունենում ներքևից վերև: Բույսի ներքևի ունդերը ավելի շուտ են հասունանում, քան վերևի ունդերը: Փաթաթվող լորինները ավելի երկար վեգետացիա ունեն, քան թուփ լորինները:

Բացի վերոհիշյալ երկու ձևերից կան նաև կիսափաթաթվող կամ միջանկյալ ձևի լորիններ, որոնք նույնպես մշակվում են դաշտային պայմաններում:

ԼՈՒՌՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Լուրին հարավային տաք երկրի բույս է, ջերմութեան նկատմամբ պահանջկոտ:

Լուրու համար, նայած սորաի վաղահասութեան, ամբողջ վեգետացիայի շրջանում պահանջում է 1500-ից մինչև 3000 աստիճանի սահմաններում ջերմութեան:

Սովետական Հայաստանում Լուրին մշակվում է մինչև 2000 մետր բարձրութեան վրա:

Աշխարհագրական տարածման տեսակետից Լուրին մշակվում է եգիպտացորենի կուլտուրայի մշակութեանը զուգընթաց: Այն երկրներում կամ մարզերում, որտեղ եգիպտացորենի մշակումը շատ է տարածված, տարածված է նաև Լուրու մշակութեանը: Մի շարք երկրներում՝ թե մեղ մոտ և թե արտասահմանում, հեգիպտացորենի լայն միջշարքերում Լուրի են ցանում և այդպիսով ստանում են միևնույն տարածութեանից միաժամանակ երկու կուլտուրայի բերք: Լուրու նմանօրինակ մշակումը շատ տարածված է Վրացական ՄՍՌ-ում, նամանավանդ Աբխազիստանում:

ԼՈՒՐԻՆ ԺՈՂՈՎՐԻՒՄԿԱՆ ՄՆՆԴԻ ՄԵՋ

Ըննդիզենների դերը ժողովրդական սննդի մեջ սպիտակուցի բալանսը կարգավորելու խնդրում շատ մեծ է: Սպիտակուցային սննդանյութերի պարունակությամբ Լուրին մոտենում է մոխին: Օրինակ, ձկան մեջ սպիտակուցի առկայությունը կազմում է 18—19, մսի մեջ 20—22, իսկ Լուրու հատիկների մեջ 20—23, մինչդեռ գյուղատնտեսական ծաղում ունեցող ուրիշ պրոդուկտների, օրինակ ցորենի մեջ սպիտակուցային նյութի պարունակությունը կազմում է 12—14 տոկոս, աշորայի և գարու մեջ՝ 10 տոկոս, իսկ կաղամբի մեջ 1—2 տոկոս: Կարևոր է նաև այն, որ Լուրու սպիտակուցների քիմիական կազմը շատ մոտ է մսի մեջ եղած հում պրոտեինի քիմիական կազմին: Լուրու պրոտեինի օգտագործումն ու յուրացումը օրգանիզմի կողմից, սովորական վերամշակման պայմաններում, հասնում է մինչև 15 տոկոսի:

Լուրու հատիկների կեպը մաքրելու և լավ մանրացնելու դեպքում պրոտեինի յուրացման գործակիցը ավելի բարձր է վիճում:

Բացի այդ լրբին բավականաչափ հարուստ է B վիտամինով, իսկ լուբու կանաչ ունդերը՝ C վիտամինով, լրբին հարուստ է նաև կալցիումի և երկաթի աղերով:

Լոբու դարմանը լավ անասնակեր է ոչխարների, ձկների և խոշոր եղջյուրավոր անասունների համար: Համեմատած ուրիշ կուլտուրաների դարմանի հետ, լոբու դարմանի կերարժեքը բավականին բարձր է: Լոբու դարմանը երեք անգամ ավելի շատ պրոտեին է պարունակում իր մեջ, քան վարսակի դարմանը, ավելի քան երկու անգամ շատ, քան եգիպտացորենի ցողունը:

Մեզ մոտ Հայկական ՍՍՌ-ում վերջին հինգ տարիների ընթացքում լուբու ցանքատարածությունը հետևյալ թվերով է արտահայտվել՝

№№ բ/կ.	Տարին	Ցանքատարածությունը (հեկտար)
1	1941 թ.	1116
2	1942 թ.	802
3	1943 թ.	965
4	1944 թ.	908
5	1945 թ.	1382

Պետք է նշել, որ համեմատած մյուս կուլտուրաների հետ, ընդհանրապես մշակութունը մեզ մոտ բավականին հեռու է: Մեզ մոտ ողջ հանրապետություն մեջ ընդհանրապես ատանձին բավականաչափ խոշոր մասսիվներ չկան: Լոբի ցանում են գլխավորապես հետևյալ շրջանները՝ Էջմիածին, Արտաշատ, Հոկտեմբերյան, Բերիա, Զանգիբաստը, Վեդի, Նոյեմբերյան, Շամշադին, Աշտարակ, Գորիս, Կոտայք, Ղափան, Մեղրի և մի քանի այլ շրջաններ: Բացի այդ նշված շրջաններից լոբի այս կամ այն չափով ցանում են նաև ուրիշ շրջաններում, սակայն այդ տեղերում լոբու մշակութունը կրում է բանջարանոցային բնույթ և մշակվում է գլխավորապես կանաչ լոբի ստանալու համար: Օրինակ, Ստեփանավանում և Կիրովականում ցանում են փաթաթվող ձևի լոբիներ բանջարանոցային պայմաններում: Բնական է, որ այդ

շրջանների պայմանները նպաստում են, որպեսզի այդ տեղե-
րում մշակվի սարու լոբի, քանի որ հենափայտեր ձեռք բերելը
այնքան զժվար չէ, ինչպես լինում է Աշտարակում, Էջմիած-
նում, Կոտայքում և մյուս ոչ անտառային շրջաններում: Լենի-
նականի հարթավայրում ընդեղեններ ընդհանրապես շատ քիչ են
մշակել, չեն մշակել նաև լոբի:

Առաջին անգամ Լենինականում լոբու մշակման փորձեր
ղրվել են նախկին Համաժողովենական Բուսաբանական Ինստի-
տուտի տեսակափորձադաշտում 1931—1934 թվերին: Փորձերը
ղրվել են անջրդի պայմաններում:

Փորձարկված մի շարք սորտերի մեջ հատիկի ամենաբարձր
բերքը հետևյալն է եղել:

№№ ը/կ	Տարին	Միջին բերքը ց/հ.
1	1931 թ.	5,5
2	1932 թ.	1,42
3	1934 թ.	2,64

Ինչպես տեսնում ենք փորձարկման երեք տարվա ավյալ-
ներից, Լենինականի հարթավայրում դեմի պայմաններում լո-
բու մշակումը հնարավոր չի, քանի որ լոբին որքան զգայուն է
ջերմության նկատմամբ, նույնքան և պահանջկոտ է խոնավու-
թյան նկատմամբ: Ելնելով վերոհիշյալ ավյալներից մինչ այժմ
տիրում է այն կարծիքը, որ Լենինականի հարթավայրում լոբու
մշակումը հատիկ ստանալու համար ոչ մի հեռանկար չունի: Հայ-
կական ՄՍՌ Գիտությունների Ակադեմիայի Լենինականի փորձա-
դաշտում մեր կատարած փորձերը լրիվ իրավունք են տալիս
ասելու, որ Լենինականի հարթավայրում դաշտային կուլտուրա-
ների մեջ լոբին պետք է զբաղի իր տեղը: Մեր փորձերից
ստացվեցին հետևյալ ավյալները՝ տեղական (Կիրովականի
շրջանից բերած) լոբիներից ընտրված՝ որոշ ձևեր 1945 թ.
ավեցին միջինը 11,3 ցենտներ, 1946 թ. 12,4 ցենտներ հատիկի
բերք, որը լոբու համար քիչ բերք չէ:

ՀՈՒՈՒ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լորին միամյա կուլտուրա է, խիստ ինքնափոշոտավող բույսերի շարքին է պատկանում, լինում է նաև քիչ չափով խաչաձև փոշոտում: Հատիկները լինում են տարբեր մեծության: Նրանք լինում են երկկամունքաձև, կլոր, երկարավուն, գույնը՝ բաղմազան: Ցանքից 8—10 օր հետո երևում են առաջին գույգ տերևները: Ծաղիկները դասավորությունը կոմպակտ է: Ցանքից 35—40 օր հետո ծաղկում է: Ընդհանուր առմամբ լորին կարճ վեգետացիա ունեցող բույս է: Լորու ամբողջ վեգետացիան Լենինականի պայմաններում տևում է 82—95 օր, նայած սորտին: Վեգետացիայի այս տևողությունը բացի սորտից հաճախ կախված է նաև տարվա կլիմայական պայմաններից: Համեմատաբար խոնավ տարիներին, ինչպես բոլոր կուլտուրաների, նույնպես և լորու վեգետացիան գլավի չափով (5—10 օր) երկարաձգվում է:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Լորին պետք է ցանել լավ մշակված հողամասերում: Լավ է, որպեսզի լորու համար հատկացված հողամասը լինի աշնանից խորը վարած 20—22 սմ: Վաղ գարնանը դաշտային աշխատանքներն սկսելիս հողամասը պետք է անմիջապես փոցխել:

Մինչև ցանքը այդ հողամասում ծլում են մուխխոտեր, որոնց ոչնչացնելու համար պետք է կատարել նախացանքային կուլտիվացիա, անհրաժեշտություն դեպքում նույնիսկ կրկնավար:

Լենինականի պայմաններում պետք է լորու ցանքի համար հողի մշակումն ու նախապատրաստումը կատարել այնպես, որ մայիսյան հորդ տեղումներից ստացված խոնավությունը կուտակվի հողում, տալով նվաղագույն քանակի գրլորշիացում: Ցանքից 40—45 օր հետո, մինչև ծաղկումը, լորին սովորաբար չի ջրվում, այդ պատճառով էլ լորու կուլտուրայի համար խիստ կարևոր է պայմաններ ստեղծել՝ մայիս, հունիս և հուլիս ամիսների միջնորոտային տեղումները լրիվ չափով օգտագործելու համար: Հողի նախապատրաստումը և այդ հողում անհրաժեշտ քանակությունը խոնավություն ամբարելը խիստ կարևոր է լորու նորմալ բերք ստանալու համար:

ՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Լորին ցրտի նկատմամբ խիստ զգայուն կուլտուրա է, նա Յիլսիուսի — 0,1 աստիճանի տակ վնասվում է, իսկ մինուս 1 աստիճանի ժամանակ ամբողջապես ցրտահարվում: Լորու ցանքի համար հողի ջերմաստիճանը պետք է լինի 8—10, իսկ ձիւլու համար ջերմությունը պետք է լինի 10—12 աստիճանից ոչ պակաս:

Լորու ցանքի համար օւլտիմալ պետք է համարել այն ժամկետը, երբ նրա մատղաջ և խիստ զգայուն ծիլերը չեն կնթարկվում ուշ գարնանային ցրտահարություններին: Ուշ գարնան ցրտահարությունները Լենինականում սովորաբար տեղի են ունենում հունիսի առաջին կեսին: Եթե ցրտահարությունը զուգադիպում է խոնավ անձրևային եղանակներին, ապա այդ լինում է խիստ ուժեղ, որից տուժում է ոչ միայն լորին, այլ և բանջարանոցային և դաշտային մի շարք այլ կուլտուրաներ, օրինակ կարտոֆիլը, պամիդորը, կաղամբի նորագիլը սածիլները և այլն:

Ըստ օգերևութաբանական կայանի տվյալների՝ Լենինականում մի շարք տարիների ուշ գարնանային ցրտահարությունը եղել է,

Տարիներ	Ցրտահարության ժամանակը	Ջերմաստիճանը ըստ Ց.
1941	28/5	— 16
1942	7/6	— 0,3
1943	3/6	— 1,8
1944	11/6	— 0,7
1945	2/6	— 4,6

Ահավաստիկ, հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը Լենինականի հարթավայրի համար լորու ցանքի ամենալավ ժամանակը պիտի համարել հունիսի առաջին տասնօրյակը:

Լորու ցանքը պետք է սկսել հունիսի 5-ից և ավարտել ոչ ուշ քան հունիսի 10-ը: Դա մեր կարծիքով ամենալավ ժամանակն է, քանի որ այդ ժամանակ հողի ջերմությունը 10—12Ց-ից բարձր է լինում և սերմերի նորմալ ծիլու համար ստեղծվում են ջերմության բարենպաստ պայմաններ: Լորին Լենինականի

հարթավայրի պայմաններում պետք է ցանել հունիսի առաջին հնգօրյակում՝ նաև նրա համար, որպեսզի նրա մատղաշ ծիլերի հողից դուրս գալը չզուգադիպի ուշ գարնանային ցրտահարու-թյուններին:

Լոբու ծլումը տևում է 8—10 օր, իսկ ցրտահարությունը տեղի է ունենում սովորաբար հունիսի 1-ին կեսում, հետևաբար հունիսի 5-ից հետո ցանված լոբու մատղաշ ծիլերը ցրտահարության ժամանակ դեռևս լինում են հողի տակ: Դ հարկե, սրանով մենք չենք ուզում ասել, որ անպայման ցրտահարու-թյուններ լինում են միշտ միևնույն ուժգնությամբ և միև-նույն ժամանակ:

ՑԱՆՔԻ ՁԵՎԸ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Լոբին պետք է ցանել շարքացանով և լայն շարքերով: Այն պրակտիկային, որ գոյություն ունի մեր կոլտոգներում ընդ-հանրապես ընդեղենները շղարացան փոցխի տակ ցանելու խընդ-բում, պետք է վերջ տրվի: Լոբին պետք է ցանել հացահատիկի շարքացանով, վերնացանք կատարելու միջոցով, շարքը շարքից 45—50 սմ հեռավորությամբ: Ցանքից հետո շարքերը պետք է նոսրացնել, թողնելով 10—12 սմ միջ-բույսային հեռավորու-թյուն:

Ցանքը հնչցահատիկի տասերեք շարքանի շարքացանով կատարելու դեպքում պետք է բաց թողնել միայն առաջին, 5-րդ, 9-րդ և 13-րդ անցքերը (50 սմ միջշարքային հեռավոր-րությամբ), իսկ մնացած բոլոր անցքերը փակել: Որպեսզի բոլոր դեպքերում ամբողջ ցանքի ժամանակ միջշարքային տարածու-թյան 50 սմ հեռավորությունը պահպանվի, անհրաժեշտ է առաջնաքաշ անիվը մեկ կողմից 32 սմ դուրս հանել — երկա-րացնել: Լոբին կարելի է ցանել նաև շաքարի ճակնդեղի շար-քացանով, բամբակի շարքացանով և հատուկ լուբու կամ բակ-լայի համար պատրաստված շարքացաններով: Լոբու սերմը պետք է ցանել այնպիսի խորությամբ, որպեսզի ծիլը դուրսությամբ կարողանա հողից դուրս գալ: Թեթև հողերում ցանքի խորու-թյունը պետք է լինի 4—5 սմ, ծանր հողերում ավելի սաղր, այն է 3—4 սմ: Չոր և թեթև հողերում սերմը պետք է ցանել 5—6 սմ խորությամբ:

Որպես ընդհանուր կարգ խոշոր հատիկ ունեցող լոբիները
ցանում են ավելի խոր, քան մանր հատիկ ունեցող լոբիները:

Մեր պայմաններում լոբին 5—6 սմ-ից պակաս խորու-
թյամբ չպետք է ցանվի, որովհետև Լենինականի հարթավայ-
րում հողերը ծանր չեն և բացի այդ չորության վախը միշտ էլ
առկա է:

ՑԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ,

Լոբիներն ըստ իրենց հատիկի մեծության բաժանվում են
3 խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են մանրահատիկ լոբիները,
որոնց հազար հատիկի կշիւը տատանվում է 200—300 գրամի
սահմաններում: Մեկ հեկտար տարածության վրա մանրահատիկ
լոբի ավելի քիչ պետք է ցանել, քան խոշոր հատիկ ունեցող լո-
բի: Մեկ հեկտարի ցանքի նորման մանրահատիկ լոբիների հա-
մար պետք է լինի 90—100 կգ: Երկրորդ խմբի մեջ մտնում են
միջակ մեծության հատիկ ունեցող լոբիները: Այս խմբի լոբինե-
րի հազար հատիկի քաշը տատանվում է 300-ից—379 գրամի
սահմաններում: Յանքի նորման մեկ հեկտարին պետք է լինի
150—200 կգ: Երրորդ խումբը կազմում են խոշոր հատիկ ու-
նեցող լոբիները, որոնց հազար հատիկի քաշը լինում է 280—
450 գր. խոշոր հատիկ ունեցող լոբիների ցանքի նորման հեկ-
տարին պետք է լինի 260-ից 300 կգ:

ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԻ,

Լոբին ծլելուց անմիջապես հետո անհրաժեշտ է միջշար-
քային տարածությունները մակերեսորեն փխրեցնել, որպեսզի
նորածիլ բույսի արմատների զարգացման համար ստեղծվեն
բարենպաստ պայմաններ և կանխվի հողի միջի խոնավության
գոյորշխացումը: Լոբու բույսերը 10—12 սմ բարձրության հաս-
նելիս անհրաժեշտ է կատարել թեթև ըռակից — փխրեցում:
Միջշարքային տարածության փխրեցումն ու մշակումը պետք է
կատարվի հաջորդաբար, յուրաքանչյուր անձրևից և ջրելուց
հետո, երբ հողը քեշի է եկել: Բոլոր տեսակի միջշարքային մշա-
կումների ժամանակ պետք է զգուշ լինել, որպեսզի տերևները

հողով չծածկվեն կամ տերևների վրա հող չթափվի, որովհետև լոբու տերևների վրա հող թափվելը առաջացնում է որոշ բակտերիալ հիվանդություններ: Պետք է զգուշ լինել, որ առավտաները, երբ անձրևների հետևանքով տերևները թրջվել են, լոբու փխրեցում չկատարվի, այլ կերպ այդ թաց տերևների թիթեղի վրա հող կթափվի:

Լոբին բավականաչափ խոնավասեր բույս է: Սովորաբար լոբին սկսում են ջրել ծաղկումը սկսելուց հետո միայն:

Լենինականի պայմաններում հուլիս ամսին, այսինքն լոբու զարգացման կրիտիկական շրջանում, երբ սկսվում է նրա կոկոնակալումը, իսկ տեղումներ չեն լինում կամ լինում են շատ քիչ, պետք է լոբին անդայման ջրել: Հետագա ռոտումը պետք է կատարել ունդերը կազմակերպելու և ապա հատիկները ցնելու ժամանակ: Այստիպով, Լենինականի պայմաններում հատիկ ստանալու համար լոբին պետք է ջրել 3—4 անգամ, որը լրիվ կապահովի նրա նորմալ բերքը:

ԲԵՐՐԱՀԱՎԱԲԸ

Լոբու բերքահավաքը կատարվում է այն ժամանակ, երբ քոլոս ունդերը հավասարաչափ հասունացած են լինում և ընդունում են բաց դեղնավուն գույն: Այս տեղի է ունենում, երբ ունդերի միջի հատիկները հասունացման մոմային շրջանը անցկացրել են և իրենց գույնով հասունացած հատիկի տեսք ունեն:

Լոբու հասունացումը չպետք է որոշել միայն ունդերի գույնով, որովհետև այդ ձևով հասունացումը որոշելը խափուսիկ է լինում: Հաճախ լոբու ունդերի գույնը փոխվում և դեղնավուն է դառնում, մասամբ էլ ունդերը չորանում են, սակայն նրանց մեջ հատիկը գեղևս լրիվ հասունացած չի լինում: Միաժամանակ պետք է ուշադիր լինել, որ ունդերը շատ չչորանան և հատիկները չթափվեն, որովհետև լոբիների և առհասարակ ընդեղենների թափվելու հատկութունը բավականին ուժեղ է:

Հավաքված բերքը պետք է անմիջապես տեղափոխել կալ, որտեղ նախօրոք տեղ է պատրաստված լինում դիզելու համար: Հավաքված բերքը դաշտում թողնելու դեպքում տեղի կույնենաբերքի բավանակաչափ մեծ կորուստ, քանի որ արևի տակ

բարբոցների մեջ լոբու ունդերը չորանում և բացվում են ու հատիկները թափվում: Լոբու կալսումը կարելի է կատարել հացահատիկի սովորական կալսիչներով, կարգավորելով կալսող թմբուկի ատամների բացվածքը: Որպեսզի կալսման ժամանակ լոբու հատիկները չփշրվեն, անհրաժեշտ է կալսիչի թմբուկի բացվածքը մեծացնել և պտույտների թիվը պակասացնել:



1892 S

~~1884~~

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՒ Ի ԳԾՈՎ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գ. Ս. Գազարյան.—Քիմիական տարրեր տարրերի նշանակութիւնը
բույսերի համար

Ա. Ս. Հառուրդունյան.—Ինչպէս պետք է պահել հանքային պարար-
տանյութը

Կ. Յ. Մարգարյան.—Ֆլուորանտինութիւն մեջ օդոտարածվող թու-
նազար նյութեր

Ա. Ս. Սարխոյան.—Գազը (պայուհը) և պայքարը նրա [դեմ


Գ. Խալարյան.—Թթենու տերեղ սրպիս շերտի կեր

28011

Տեխնիկական խմբագիր՝ Մ. ԳՈՓԻԼԵՅՑՅՆ
Պարագրիչ՝ Ա. ԱՐԶՈՒՅՈՒՅՑՅՆ

Հանձնված է արտադրության 10/Մ 1947 թ. ստացազրված է ուղևոր.
30/Մ 1947 թ. ՎՑ 03622. գատմեր 723. հրատ. 465. արկարծ 1000
1 տպագր. մամուլ, մեկ մամուլում 38000 տպանիշ

Հայկական ՍՄՌ ԳՄ, տպարան, Երևան, Արցվյան № 104



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008235

464

A $\frac{\bar{L}}{18925}$

ԳԻՆԸ 2 Ռ.